**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ**

**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

14.02.2025թ. N 02/16.4/2424-2025

«Կանժիլստրոյ» սահմանափակ պատասխանատվությամբ
ընկերության տնօրեն
պարոն Արմեն ԳԵՂԱՄՅԱՆԻՆ
էլ.փոստի հասցե՝ kanghilstroj@rambler.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի (ամբողջությամբ) լուծելու մասին

Հարգելի պարոն Գեղամյան

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Կանժիլստրոյ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) միջև 2021 թվականի ապրիլի 28-ին կնքվել է ՀՀ Վայոց Ձորի մարզի գ. Չիվայի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների կատարման N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/2-1 գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

ՀՀ կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի N 2060-Ն որոշմամբ նախատեսվել են ֆինանսական միջոցներ, որի համաձայն 2025 թվականի հունվարի 17-ին Ընկերությանը ծանուցվել է Պայմանագրում փոփոխություն կատարելու մասին N 14 համաձայնագրի նախագիծը՝ ներկայացման վերջնաժամկետ սահմանելով 2025 թվականի փետրվարի 10-ը ներառյալ (15 աշխատանքային օր): Ընկերության կողմից ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 33-րդ կետի 12-րդ ենթակետի և Պայմանագրի 8.13 կետով սահմանված ժամկետում չեն ներկայացվել պայմանագրի և որակավորման ապահովումների բանկային երաշխիքները:

Հիմք ընդունելով Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետի և Պայմանագրի 8.13 կետի պահանջները՝ Պատվիրատուն Ընկերության հետ կնքած Պայմանագիրը 2025 թվականի փետրվարի 14-ից միակողմանիորեն լուծում է:

Համաձայն Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի՝ Պայմանագիրը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումը 2025 թվականի փետրվարի 14-ին կտեղադրվի տեղեկագրում, որին հաջորդող տասներորդ օրացուցային օրը կկայացվի Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումն Ընկերությանը գնումների գործընթացին իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու մասին: Որոշումը կայացվելուն հաջորդող օրն այն գրավոր կտրամադրվի լիազորված մարմնին և Ընկերությանը:

Եթե մինչև Պատվիրատուի ղեկավարի որոշման կայացման վերջնաժամկետը լրանալու օրը, համաձայն ներքոնշյալ աղյուսակի, ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի հաշվեհամարներին Ընկերության կողմից վճարվեն պայմանագրի և որակավորման ապահովման գումարները, ապա Պատվիրատուն Ընկերությանը Ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնի լիազորված մարմին:

| Պայմանագրի ապահովում | | | | Որակավորման ապահովում | | |
|---|---|---|---|---|---|---|
| Երաշխիքի գումար /ՀՀ դրամ/ | Տուժանքի գումար /ՀՀ դրամ/ | Երաշխիքի հաշվեհամար | Տուժանքի հաշվեհամար | Երաշխիքի գումար /ՀՀ դրամ/ | Տուժանքի գումար /ՀՀ դրամ/ | Տուժանքի և երաշխիքի հաշվեհամար |
| 58 930 836 | 7 308 732 | 900008000664 | 900005000758 | 55 021 500 | 10 013 000 | 900008000664 |

Հարգանքով՝

2/14/2025

X

ԳՈՒՐԳԵՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Signed by: YEGHIAZARYAN GURGEN 2710630095

Գուրգեն ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀՀ ՔԿ ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական
հաշվառման վարչության պետ Հասմիկ Բաղինյան, Հեռ: 011621822
Կատարող՝ գնումների կազմակերպման
բաժնի պետ՝ Արայիկ Մնացականյան, Հեռ: 011621722